նասակար խնդիրս յաջաղկուսաց, որ հակառակ է եկեղեցական և վանական օրինաց, մանաւանդ Կայսերական հրովարտակին շնորհեալ Պատրիարքաց։ Զմտաւ ածցեն այնպիսիքն, թէ ազգականք նոցին 'ի դալստեան իւրեանց 'ի վանս զի՞նչ բերին, և այժմ զի՞նչ խնդրեն։ Ապա ստիպէ զնա փոյթ տանել խափանել զայնպիսի անհեդեդ խնդիրս նոցա հրամանաւ Արքայի և առնուլ հրովարտակ, զի մի՛ զկնի մահուան միաբանաց ազգականք նոցին կողոպտիչ լիցին վանաց (1763)։

Սակաւ ինչ գժտութիւն միաբանաց Ս. Յարութեան ընդ Լատինս սակս կանթեղ լուանալոյ տեղւոյն. այլ Փաւլոյ տեսուչ նոցին փութով զիջաւ ընդ խոհեմ բանս Կարապետ Պատրիարքի, և եղեւ խաղաղութիւն։

Ի դալստեան Կուսակալին Դամասկոսի ըստ սովորութեան յերուսաղէմ, և առնլոյ զսահմանեալ տուրս 'ի վանօրէից թէ յայտնի և թէ գաղտնի։ Ապա 'ի դրդմանէ ուրումն գնաց 'ի Սիոն յուխտ, և 'ի դարձին իւրում եկեալ նստաւ 'ի պարտէզն Հայոց, և կոչեալ առ ինքն զերկուս յայլազգեաց քաղաքին եհարց ցնոսա վասն Փրկչի վանաց. թէ զի՞նչ իցէ անհեդեդ շինուածն այն, և նոքա ասեն թէ վանք է Հայոց. Յոյնք և Լատինք ունի՞ն բաժին ինչ 'ի սմանէ, նոքա ասեն, ոչ, միայն սեփհականութիւն է Հայոց։ Հի՞նէ շինուածն թէ նոր. ասեն, որպէս տեսեալ եմք 'ի սկզբանէ այսր, նոյն է։ Շինուածն կարի բարձր է քան զպարիսպ քաղաքին և քան զՍիոն։ Ապա յարուցեալ անտի գնաց յիջեւանս իւր, և առաքեալ զոմանս խնդրեաց 'ի Հայոց զհրովարտակ վանաց, եւ Կարապետ Պատրիարք յղեաց առ նա զպատճէն հրովարտակին Սէլիմայ. և նորա կոչեալ զայլազգիս Սիոնի ընթերցաւ զայն առաջի նոցա, ապա եհարց ցնոսա, դուք եւս այսպէս գիտէ՞ք, նոքա ետուն պատասխանի. մանաւանդ Սաչագլի կոչեցեալն, թէ եմ 'ի հասակի 70 ամաց եւ 'ի Սիոն ծնայ, այսպիսի տեսի զվանքն։ Լուեալ զայսոսիկ Կուսակալին դարձոյց վերստին զհրովարտակն առ Պատրիարքն առանց ասելոյ ինչ։ Եւ 'ի չուելն իւրում գնացին առ նա Փոխանորդք երից վանաց յուղարկել զնա. յայնժամ բանս արկեալ ասէ ցՓոխանորդն Հայոց թէ յինէն վշտացեալ էք, իբր թէ